— Երբեմն բոլորովին անծանօթ մարդիկ յայտնուում են նրա մօտ, մի օր, երկու օր մնում են եւ դարձեալ անյայտանում են: — Դուք մահճակալի վրայ ինչո՞ւ էք զարմանում, որդի, — խօսքը փոխեց տէր հայրը, — իր սենեակներում գեղեցիկ վառարաններ ունի, բայց երբեք կրակի երես չեն տեսնում: Դուք չգիտէք, մեր կողմերում ձմեռը որքան սաստիկ է լինում. մարդու թուքը բերանի մէջ սառչում է: Բայց նա իր անվառ սենեակի լուսամուտները բաց թողած, այնպէս է քնում: Շատ անգամ մի քանի օրով քաղցած է մնում, ոչ ուտում է եւ ոչ խմում, միայն ծխում է: Բայց երբեք իր ուժերը չէ կորցնում: Իսկ երբ սկսում է ուտել, հինգ մարդու չափ ուտում է: Նա հում միս էլ է ուտում, եւ ոչխարի արիւնը այնպէս է խմում, ինչպէս ոչխարի կաթը: Սկզբում այդ բաները գիւղացիների աչքում խիստ օտարոտի էին թւում, բայց յետոյ ընտելացան: Միս, ասում է նա, ամէն տեղ կարող եմ գտնել, կամ մի թռչուն կորսամ, կամ մի վայրենի ոչխար կը գնդակահարեմ, բայց եփելու համար կրակ ամէն տեղ դժուար է գտնել, այդ պատճառով պէտք է սովորել՝ առանց եփելու եւս ուտել միսը:

— Բայց ինչո՞ւ նա օրերով քաղցած է մնում:

— Առաջ ես այնպէս էի կարծում, որ հոգու համար է անում. մեր հին ճգնաւորների նման ծոմ է պահում: Մի անգամ հարցրի, նա բոլորովին այլ կերպ բացատրեց իր ծոմապահութեան պատճառը: Տէր հայր, ասաց նա, կարող է պատահել, որ ես ստիպուած կը լինեմ մի որեւէ լեռան խորքերում պատսպարուած լինել, որտեղ ոչ բնակութիւն կայ եւ ոչ հաց, կարող է պատահել, որ յանգա-մանքների պատճառով ես ստիպուած կը լինեմ մի քանի օր այնտեղ քաղցած մնալ, չէ՞ որ այժմեանից պէտք է սովորեցնեմ ինձ համբերել քաղցածութեան: Եւ այդպէս նա միշտ երեւակայում է մի անապատական լեռնային կեանք, հեռու մարդկային բնակութիւնից, ամայութեան մէջ, խուլ, մթին քարանձաւներում, եւ մի այդպիսի կեանքի համար վաղօրօք աշխատում է պատրաստուել: Բայց ինչո՞ւ համար, ոչ ոք չգիտէ:

— Այդպիսի մի տարօրինակ մարդ է նա, — շարունակեց տէր հայրը, — եթէ մօտենաք նրա բնակարանին, այնտեղ կը տեսնէք զանազան մեծութեամբ, զանազան ծանրութեամբ քարեր: Համարեա ամէն օր, որոշեալ ժամերում, նա այդ քարերը բարձրացնում է եւ ձեռքով զանազան շարժումներ է գործում: «Ուժս փորձում եմ, — ասում է նա, — որ տեսնեմ, եթէ մի օր պէտք լինի այսպիսի քարեր միմեանց վրայ դարսել, արդեօք կարո՞ղ կլինեմ»: «Քարերով տո՞ւն պիտի շինեքէ: «Ոչ, մի ուրիշ բան»... Եւ այսպէս, փոքրը ցած է դնում եւ աւելի մեծն է վեր առնում, եւ անդադար շարում է միմեանց վրայ: Չափազանց հոգ է տանում թէ իր մարմինը ամրացնելու եւ թէ իր ուժի վրայ: